

ՀԱՐՑՈՒՄ ՊԱՏԱՍԽԱՆ Ս. ՄԿՐՏՈՒԹԵԱՆ ԵՒ ԴՐՈՇՄԻ ՄԱՍԻՆ

1) Ի՞նչ է ադամական կամ սկզբնական մեղքը:

Մեր նախածնողներուն մեղսագործութեամբ մարդ արարածը կորսընցուց դրախտային երանական վիճակը, անմիջական եւ երանական կապը արարիչին հետ եւ ժառանգեց մահը: Ադամական մեղքը կը փոխանցուի բոլոր մարդկանց սերունդէ սերունդ եւ ամբողջ մարդկութիւնը կ'ապրի այդ մեղքին մէջ եւ ոչ ոք կը ծնի առանց մեղքի: Այդ մեղքը կը ջնջուի միայն Ս. մկրտութեամբ:

Եթէ Ադամ ազատ կամքով հեռացաւ Աստուծմէ, իր անհնազանդութեամբ զրկուեցաւ Աստուծոյ հետ անմիջական հաղորդակցութենէն եւ Աստուծոյ որդի ըլլալու շնորհքէն, ապա մենք Ադամի ժառանգորդներս, Ս. մկրտութեան խորհուրդով մաքրուելով ադամական եւ միջնաւ Ս. մկրտութիւնը գործած բոլոր մեղքերէն, դարձեալ կը որդեգրուինք Աստուծոյ կողմէ եւ մեր ամբողջ կեանքի ընթացքին ճիգ ու ջանք կը գործադրենք պահպանելու համար Ս. մկրտութեամբ ստացած շնորհքները:

Այս խորհուրդով կը սկսի մեր փրկութեան ճանապարհը եւ սատանայի ու անոր գործակիցներուն, նաեւ մեղքի դէմ շարունակական պատերազմը, որ կարող ենք յաղթահարել միայն Տիրոջ օգնութեամբ եւ Անոր ապաւինելով:

ԱՂԱՆԴԱՒՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐ

ԲԱՍԸԼԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՌՕՏ ՊԱՏՄԱԿԱՆԸ

3. ԱՍՏՈՒԾՈՅ ՈՐԴԻՆ՝ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ 4. ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ

բ- Կ'ըսեն, թէ Սուրբ Հոգին անձ մը չըլլալով՝ բնականաբար Աստուած ալ չէ: Սակայն Նոր Կտակարանը մեզի ցոյց կու տայ, թէ անիկա ո՛չ միայն անձ է, այլ՝ Աստուած, որովհետեւ «Հօրմէն կ'ելլէ» (Յովհ. 15-26), ինչ որ կը նշանակէ, թէ Հօրը բնութիւնը ունի: Նոյնպէս Ա. Կոր. 12.3-6-ին մէջ յատկօրէն ցոյց կը տրուի, թէ Սուրբ Հոգին Հօրը եւ Որդիին հետ միասին կատարեալ Աստուած է: Ասիկա ի յայտ կու գայ նաեւ Անանիայի եւ Սափիրայի դրուագին մէջ, ուր Պետրոս առաքեալ Սուրբ Հոգին «Աստուած» կը կոչէ, ըսելով. «Անանիա՛ ինչո՞ւ Աստուան քու սիրտդ լեցուց, որ դուն Սուրբ Հոգիին սուտ խօսիս եւ ազարակիս գինէն խորես... Ո՞՞ջ թէ՛ ՄՍԲՈՑ ՍՈՒՏ ԽՕՍԵՑԱՒ, ԱՅԼ՝ ԱՍՏՈՒԾՈՅ» (Գործք 5.3-4):

5. ՄԱՐԴԸ ԵՒ ՀՈԳԻՆ

Եհովայի վկաները կը մերժեն մարդուն հոգի ունենալը եւ հոգիին անմահութիւնը: ա- Կ'ըսեն, թէ մարդ արարածը հոգի չունի: Մարդը «կենդանի հոգի» է, այսինքն շունչ ունեցող արարած է՝ բոլոր անասուններու նման, բայց չունի անմահ հոգի: Հոգին նոյնինքն մարդն է, կ'ըսեն՝ մարդկային «հոգի»...

Միլեի ընթերցող, ճՐԱԳ թերթը ամէն Կիրակի կը բաժնուի մեր ժողովուրդին, եկեղեցիներու բանկային մօտ: Նաեւ Facebook-ի վրայ փնտռել «Jerak կամ ՃՐԱԳ», ապա սեղմել «Like»ը, կարդալու կամ անդամագրուելու համար:

ՀԱՍՅԷ.



ԲՈՒ ԽՕՍԵՐ ԽՍ ՈՏԹԵՐՈՒՄ ԾՐԱԳ Է ՈՒ ԽՍ ԸՃԻՂՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (Ս. 119-105)

ՃՄ. ՏԱՐԻ ԿԻՐԱԿԻ, 15 ԱՂՈՒԼ 2018 ԹԻԻ 15

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԾԱՇՆՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄԵՐ
Գրծ. 9.23-31 Ա. Պետ. 2.1-10
ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՅՈԿՅԱՆՈՒ 2.23-3.12

ԱՇԽԱՐՀԱՍՏԱՐԱՆ (ԿԱՆԱՉ ԿԻՒՐԱԿԷ)

Զատիկի տօնին, մինչ Յիսուս Երուսաղէմ կը գտնուէր, շատեր հաւատացին իրեն, երբ տեսան անոր գործած հրաշքները: Սակայն Յիսուս ինքզինք չէր վստահեր անոնց, որովհետեւ բոլորն ալ կը ճանչնար եւ պէտք չունէր ոեւէ մէկուն մասին ուրիշին վկայութեան, քանի որ ինք գիտէր, թէ ի՛նչ կայ այդ մարդուն սիրտին մէջ:

Նիկողէմոս անունով փարիսեցի մարդ մը կար, որ հրեայ իշխան մըն էր: Գիշերով Յիսուսի մօտ եկաւ եւ ըսաւ անոր. «Վարդապետ, գիտե՞մք, որ դուն Աստուծոյ կողմէ դրկուած ուսուցիչ մըն ես, որովհետեւ ո՛չ ոք կրնայ գործել քու կատարած հրաշքներդ, եթէ Աստուած անոր հետ չըլլայ»:

Յիսուս պատասխանեց անոր. «Հաստատ գիտցի՛ր, որ եթէ մէկը վերստին չծնի, չի կրնար տեսնել Աստուծոյ արքայութիւնը»:

Նիկողէմոս հարցուց անոր. «Ծեր մարդ մը ինչպէ՞ս կրնայ նորէն ծնիլ: Կարելի բա՞ն է, որ ան կրկին մտնէ իր մօր որովայնը եւ ծնի»:

Յիսուս պատասխանեց. «Վստահ եղի՛ր, որ եթէ մէկը ջուրէն եւ Հոգիէն չծնի՛ չի կրնար երկինքի արքայութիւնը մտնել, որովհետեւ մարմինէն ծնածը մարմին է, իսկ Հոգիէն ծնածը՝ հոգի: Դուն մի՛ գարմանար, որ քեզի ըսի, թէ պէտք է կրկին ծնիք: Հովը ուր որ ուզէ կը փչէ: Դուն անոր ձայնը կը լսես, բայց չես գիտեր թէ ուրկէ կու գայ եւ ուր կ'երթայ: Նոյնպէս են բոլոր անոնք, որոնք Հոգիէն կը ծնին»:

Նիկողէմոս հարցուց. «Ինչպէ՞ս կը պատահի անիկա»:

Յիսուս պատասխանեց. «Դուն, որ Իսրայելի ժողովուրդին վրայ ուսուցիչ կարգուած ես, անիկա չե՞ս գիտեր: Վստահ եղի՛ր, թէ ինչ որ գիտեմք՝ կը խօսինք եւ ինչ որ տեսանք՝ անոր մասին կը վկայենք, բայց մեր վկայութիւնը չէք ընդունիր: Եթէ երկրաւոր բաներու մասին խօսեցայ ձեզի եւ չհաւատացիք, ինչպէ՞ս պիտի հաւատաք ինծի եթէ երկնաւոր բաներու մասին խօսիմք»:

ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

ԱՇԽԱՐՀԱՄԱՏՐԱՆ ԿԱՄ ԿԱՆԱՉ ԿԻՐԱԿԻ



Աշխարհամատուռ կը նշանակե երեւելի մատուռ կամ եկեղեցի: Բառը կազմուած է աշխարհ եւ մատուռ բառերէն: Աշխարհամատուռ, նաեւ կը նշանակէ աշխարհի առաջին մատուռը: Զատկուան տօնին յաջորդող երկրորդ Կիրակին եկեղեցական տօներու շարքին, կը յիշատակուի նաեւ Աշխարհամատրան կամ Կանաչ Կիրակի տօնը: Աշխարհամատուռը, մեզի կը յիշեցնէ Քրիստոնէութեան առաջին մատուռը, որ հիմնուեցաւ վերնատան կից, առաքեալներու կողմէ:

Առաքեալները՝ Յիսուսի կարգադրութեան համաձայն, Իր համբարձումէն յետոյ, կը հաւաքուէին վերնատուն՝ Սիոնի բարձունքին, կը յիշէին իրենց վարդապետը եւ կը կատարէին վերջին ընթրիքի ժամանակ Անոր տուած պատգամը: Կ'օրհնէին հացն ու գինին, միասին կ'աղօթէին եւ միասնաբար կը ճաշէին: Հաւաքական կեանք կ'ապրէին: Աշակերտներուն հաւաքոյթներու առաջին աղօթավայրը կոչուեցաւ աշխարհի առաջին եկեղեցին, աշխարհամատուռ եւ անոր յիշատակին եկեղեցւոյ մէջ նշանակուեցաւ տօնական օր մը:

Աշխարհամատրան տօնը կրօնական եւ եկեղեցական տեսակետէն մեծ նշանակութիւն կը ներկայացնէ: Ան Քրիստոսի հաստատած Իտէալ եկեղեցին էր, եւ այս օրերու քրիստոնեայ աշխարհի, մանաւանդ եկեղեցւոյ կրօնապետներու երազած իտէալ եկեղեցին է, ուր բոլոր քրիստոնեաները կրնան միասնաբար աղօթել, հաղորդուիլ եւ գործել:

Աշխարհամատրան Կիրակին կը կոչուի նաեւ՝ Կանաչ Կիրակի: Կանաչ կոչումի նշանակումը իմաստը ծանօթ չէ մեզի: Ոմանք այլաբանական իմաստ կը տեսնեն, որպէս նմանութիւն բնութեան եւ առաջին եկեղեցւոյ միջեւ: Կանաչ Կիրակին կը նմանցնեն բնութեան մէջ ծաղկող, ծլարձակող եւ անող կեանքին, որ կենդանութիւն ու թարմութիւն կու տայ աշխարհին եւ մարդկութեան: Աշխարհամատուռն ալ, որպէս Քրիստոսի ցանած սերմի առաջին կանաչ ծիրը՝ անցաւ, ծլարձակեց, բազմացաւ եւ դարձաւ աշխարհի վրայ տարածուած եկեղեցին:

ԱՂՕԹՔ Ե. ԱՍՈՐԻ

Մի՛ յապաղիր ողորմելու ինձի, Տէ՛ր. առանց Զու ներգործութեանդ բարին երբեք չի գործեր իմ մէջս, եւ սերմանուածը չի բուսնիր հոգիիս անդաստանին մէջ, որովհետեւ իմ մէջս նետուած Զու խօսքիդ սերմը, քաղեց չար թշնամին, եւ բուսածը չորցաւ տապէն, իսկ միւսը, փուշերուն մէջ իյնալով, խեղդուեցաւ ու չորցաւ:

Տէ՛ր, լծէ աչքերս, ինչպէս մշակը ամոլին, որ անդադար արտասուագոչ պաղատիմ Քեզի արժանի ըլլալու Զու ողորմութեանդ:

ՄԵՐ ՀԱՅՐԵՐՈՒՆ ԽՐԱՏՆԵՐԸ

ԳՏՆԵԼ ՀՈՍԱՆՔԸ

Գիրքը կ'ըսէ. «Ա՛ն որ ինձի հաւատայ, անոր սրտէն կենդանի ջուրի գետեր պիտի բխին»: (Յովհ. 7.38)

Երբ պաշտօնակիցի մը հետ կը ջանայինք համակարգիչի մը մէջ տեսարիզ մը խմբագրել, պատահին վրայ սխալի մը ակնարկութիւնը արձանագրուեցաւ, որ կ'ըսէր. «Անկարող՝ հոսանքը գտնելու»:

Համակարգիչի այդ նշումը ինձի յիշեցուց հետեւեալ ժողովրդային ասացումով. «Գնա՛՛ հոսանքին հետ»: Այս խօսքը շատերուն համար կը նշանակէ ընել եւ վարուիլ այնպէս՝ ինչպէս մեծամասնութիւնը կ'ընէ եւ կը վարուի, առանց փորձելու ընկերային եւ մշակութային տիրող հոսանքին դէմ թիավարել: Ուրիշներու համար այս խօսքը կը նշանակէ ընդունիլ տիրող պայմանները, առանց անոնց մասնաւոր ուղղութիւն տալու ճիգ մը կատարելու:

Սակայն, Յիսուսի հետեւորդներուն համար կայ ուրիշ ուղղութիւն մը հոսանքին հետ երթալու: Յիսուս ըսաւ. «Եթէ մէկը ծարաւ է, թող գայ ինձի եւ խմէ: Ան որ կը հաւատայ ինձի՛ կենարար ջուրի գետեր պիտի բխին անոր սրտէն, ինչպէս գիրքը կ'ըսէ» (Յովհ. 7. 37-38): Յիսուս խօսեցաւ Սուրբ Հոգիին մասին, որ բնակութիւն պիտի հաստատէ իւրաքանչիւր հաւատացեալի հոգիէն ներս: Իսկական իմաստով, երբ Քրիստոսի տեղ տանք մեր կեանքէն ներս, հոսանքը մեզ կը գտնէ եւ մեմք՝ հոսանքը: Անկէ ետք մեմք թէ՛ ստացողը ու թէ՛ փոխանցողը կը դառնանք կենդանի ջուրին, յաւիտեական այն աղբիւրին, որ կը գոհացնէ մեր հոգեկան ծարաւը: Մեր մէջ բնակող Սուրբ Հոգին կ'առաջնորդէ մեզ յանախ մեծ գորութեամբ եւ նպատակով մը, որ շատ աւելի վեր կը մնայ քան՝ մեր անձը:

Որպէս խողովակները Աստուծոյ կենդանի ջուրին, մեմք ազատ ենք Անոր հոսանքին հետ երթալու:

ՀՈԳԵՒՈՐ ԽՈՐՀՐԴԱՏՈՒ

«Գտնել» գԱստուած Գտնուիլ Աստուծոյ կողմէ

Կան մարդիկ որոնք կը կարծեն, թէ Աստուած «կորսուած» է իրենց կեանքին մէջ եւ անկարելի է գանկկա գտնել: Ուրիշներ կան, որոնք կը խորհին, որ Աստուած անսահմանօրէն հեռու է մարդոցմէ, եւ հետեւաբար, գո՛ւր է գանկկա օգնութեան կանչելու ամէն ջանք: Եսայի մարգարէն կու գայ պատասխանելու այս երկու խումբի մարդոց ըսելով. «Տէ՛րը փնտոնեցէք, քանի որ անկկա կը գտնուի. գանկկա՛ կանչեցէք, քանի որ անկկա մօտ է» (Ես. 55.6): ԶԱստուած փնտոնող մարդուն համար՝ գտանելի է Աստուած: ԶԱստուած կանչողին համար՝ մօտ է Ան: Եթէ կ'ուզենք «գտնել» գԱստուած, պէտք է գանկկա փնտոնենք ինչպէս մայր մը կը փնտոնէ իր կորսուած գաւակը, ինչպէս Ս. Կոյսը փնտոնեց Յիսուսը:

Նախորդ բաժինին մէջ խօսեցանք գԱստուած գտնելու մասին: Խորքին մէջ մենք չէ, որ կը գտնենք գԱստուած, այլ Աստուած ի՛նքն է, որ կը փնտոնէ եւ կը գտնէ մեզ: Յիսուս ի՛նքն էր, որ յայտարարեց որ «Մարդու Որդին եկաւ կորսուածը փնտոնելու եւ փրկելու» (Ղկ. 19.10): Ի՛նքն էր, որ գտաւ կորսուած ոչխարը: Ի՛նքն էր, որ գնաց եւ գտաւ Բեթհեզդայի անդամալոյծը (Յհ. 5.5-7): Ի՛նքն էր, որ փնտոնեց եւ գտաւ բժշկուած ի ծնէ կոյրը (Յհ 9.35): Ի՛նքն էր, որ գտաւ ծառ բարձրացած Զակէոսը (Ղկ. 19.5): Որպէսզի Յիսուս գտնէ մեզ՝ պէտք է ունենալ զինք տեսնելու գորաւոր փափաք, ինչպէս ունէր Զակէոս: Յիսուս կը յայտնուի ոտէ մէկուն, որ ծարաւ ունի իրեն հանդէպ: